ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 101-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ամաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Լիպարիտ Բեժանյանի հայտը՝

Որոշում եմ.

1.Լիպարիտ Բեժանյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ախթալա, բնակավայր Նեղոց, Թբիլիսյան խճուղի 43, (ծածկագիր՝ 06-080-0116-0133, վկայական թիվ 100922021-06-0060) հասցեի բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,301571 հա հողամասի վրա հեղուկ վառելիքի լցակայանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Լիպարի Բեժանյանին՝
1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման,
2) կառուցապատման (վերականգնման և ուժեղացման) աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 102-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Ռուզան Խաչիկյանի հայտը ՝

Որոշում եմ.

1.Ռուզան Սերյոժայի Խաչիկյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ախթալա, քաղաք Ախթալա Ս.Շահումյան փողոց 3-րդ շենք թիվ 3 (ծածկագիր՝ 06-003-0021-0001-007-002, վկայական թիվ 05042022-06-0039) հասցեի բնակարանի վերակառուցում՝ լուսամուտի ձևափոխում որպես դուռ և միջնորմերի քանդում, գործառնական նշանակության փոփոխությամբ, որպես խանութ սրահի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2.Ռուզան Խաչիկյանին ՝
1)նախագիծը ներկայացնել համաձայնեցման,
2) կառուցապատման (վերականգնման և ուժեղացման) աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ ՀՀ Լոռու մարզի Ախթալայի համայնքապետարան ներկայացնելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 103-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հողային օրենսգրքի» 68-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ի կետով

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդների և մրցույթների կազմակերպման նպատակով ստեղծել աճուրդային և մրցույթային հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1) Արկադի Թամազյան ՝ Ախթալա համայնքի ղեկավարի - հանձնաժողովի անդամ՝ աճուրդավար /աճուրդի կազմակերպիչ/,
2) Էդգար Հախվերդյան - մարզպետարանի ներկայացուցիչ, հանձնաժողովի անդամ,
3) Սամվել Փարսադանյան - ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,
4) Հունան Լորսաբյան - <<Ախթալա համայնքի բարեկարգում>> ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի անդամ,
5) Մուշեղ Մաթոսյան - Ախթալայի համայնքապետարանի աշխատակազմի առաջի կարգի մասնագետ ՝ հանձնաժողովի անդամ,
6) Անահիտ Մուսինյան ՝ Ախթալայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար - հանձնաժողովի անդամ՝ արձանագրող:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 11-ի <<Աճուրդային և մրցույթային հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 18-Ա կարգադրությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 104-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝

Որոշում եմ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի աճուրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՋՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 105-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՃԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-069-0264-0068 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,28413 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԻՆԵ ՎԱԶԳԵՆԻ ՄԱՑԱԿՅԱՆԻ, ՄԱՐԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ, ՄԵԼԱՆՅԱ ԳԱԳԻԿԻ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՎԵՐԱԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՄԱՅԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 94-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի » 188-րդ հոդվածով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշմամբ հաստատված կարգով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ի կետով, հիմք ընդունելով ՀՀ ԿԿ 07/04/2022 թվականի ԱՏ-07042022-06-0582 տեղեկանքը, << ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրի կադաստրային քարտեզի 06-069-0264-0068 ծածկագրով 0,28413 հա հողամասի նկատմամբ ճանաչել Կարինե Վազգենի Մացակյանի /ծնված՝ 1957թ/, Մարինե Գագիկի Սիրադեղյանի /ծնված՝ 1982թ/ , Մելանյա Գագիկի Սիրադեղյանի /ծնված՝1984թ/ ընդհանուր բաժնային սեփականությունը:
2. Վերագրանցման ժամանակ հիմք ընդունել որակավորված անձի կողմի 13/03/2022 թվականին տրամադրված հողամասի հատակագիծը և Ճոճկան համայնքի կադաստրային քարտեզը և հողամասը վերագրանցել 0,28413 հա մակերեսով:
3. Հողամասի սահմանները, գծային չափերը և մակերեսը որոշվում են կից ներկայացվող համայնքի ղեկավարի կողմից հաստատված և որակավորված անձի կողմից տրված հատակագծի:
4. Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5.Ուժը կորցրած ճանաչել << Լոռու մարզի Ախթալա համայնքի ղեկավարի 10 մայիսի 2022 թվականի <<Ախթալա համայնքի ճոճկան բնակավայրի վարչական սահմանում գտնվող 06-069-0264-0068 ծածկագրով հողամասի նկատմամբ Կարինե Վազգենի Մացակյանի սեփականության իրավունքը ճանաչելու, հողամասի սահմանները հաստատելու, հողամասը փաստացի ճիշտ սահմանային չափերով և մակերեսով կադաստրային քարտեզի տվյալների համաձայն վերագրանցելու մասին>> թիվ 94-Ա որոշումը:

6.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱՉՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնք
(098) 206753 akhtala2008-2010@mail.ru, akhtala.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 106-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽԹԱԼԱ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՏՎԱԾ /ՓՈՓՈԽՎԱԾ/ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետի դրույթներով, ի կատարումն ՀՀ կառավարության 2005թվ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման և հիմք ընդունելով Ախթալա համայնքի ավագանու 2009թվ.-ի սեպտեմբերի 30-ի թիվ 65-Ա որոշումը, հիմք ընդունել համայնքի կադաստրային քարտեզը և հաշվի առնելով համայնքի անշարժ գույքերի վերահասցեավորման անհրաժեշտությունը

Որոշում եմ՝

1. ՀՀ մարզ Լոռի, համայնք Ախթալա, Ախթալա ք. Թումանյան փողոց 1 շենք, թիվ 2 բնակարան հասցեի անշարժ գույքը, վերահասցեավորել՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ախթալա, քաղաք Ախթալա, Հ.Թումանյան փողոց, 42 շենք, թիվ 2 բնակարան հասցեի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԹԱՄԱԶՅԱՆ**